ԵԱՀԿ ՄՈԴԵԼ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

- Մոդել ԵԱՀԿ համաժողովը տեղի կունենա Գյումրիում **2015թ. մայիսի 1-2-ին:**
- 60 հաջողակ դիմորդներ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնելու է մեկ ԵԱՀԿ մասնակից պետություն, կընտրվեն ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից համաժողովին մասնակցելու համար:
- Ընտրված դիմորդները կմասնակցեն.
  - միջազգային հարաբերությունների և բազմակողմանի ռազմավարական բանակցություններ վարելու դասընթացի
  - հրապարակային խոսքի / ելույթներ ունենալու դասընթացի
  - ԵԱՀԿ-ի գործունեության մասին համապարփակ ներածական տեղեկատվական դասընթացի
- Համաժողովի ընթացքում կատարած աշխատանքի համար բոլոր մասնակիցները՝ որպես պարգևատրում, կստանան Մոդել ԵԱՀԿ-ի մասնակցության պաշտոնական հավաստագիր:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՄԱՍՆԱԿՑԵԼ

- Դուք Շիրակի մարզից եք
- Դուք 18-25 տարեկան երիտասարդ եք

Եթե Ձեր տվյալները համապատասխանում են, ապա՝

- Ներբեռնեք դիմումաձևերը ԵԱՀԿ կայքէջում **www.osce.org/yerevan**
- **Ներկայացրեք Ձեր դիմումները մինչև 2015թ. փետրվարի 28-ը:**
- Առաջին փուլն անցած թեկնածուները հեռախոսով հարցազրույց կանցնեն՝ միջոցառմանը մասնակցելու համար:

model OSCE

Մայիսի 1-2, 2015
Գյումրի, Հայաստան

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ԵԱՀԿ) ՄԱՍԻՆ

- ԵԱՀԿ-ն ամենաընդգրկուն տարածքային անվտանգության կազմակերպությունն է աշխարհում, որի 57 մասնակից պետությունների աշխարհագրական տարածքը ձգվում է Վանկուվերից մինչև Վլադիվոստոկ:

- Այն ունի 17 առաքելություն հարավարևելյան Եվրոպայում, արևելյան Եվրոպայում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում:

- Կազմակերպության գործունեությունը ներառում է իր տարածաշրջանում վաղ ազդարարումը, հակամարտությունների կանխարգելումը, ճգնաժամերի կառավարումը և հետ-կոնֆլիկտային վերականգնումը:

- Կազմակերպության ռազմաքաղաքական, տնտեսական ու բնապահպանական և մարդու իրավունքների անվտանգության երեք ոլորտները զբաղվում են համապարփակ անվտանգության մի շարք խնդիրներով: Դրանք ներառում են. սպառազինությունների վերահսկողություն, մարդկանց և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն, ժողովրդավարացում, ոստիկանության արդյունավետ ռազմավարություն, ահաբեկչության դեմ պայքար և տնտեսական և բնապահպանական գործունեություն:

- Բոլոր 57 մասնակից պետությունները ունեն հավասար կարգավիճակ և որոշումներն ընդունվում են կոնսենսուսի միջոցով քաղաքական, բայց ոչ իրավական պարտադրվածության հիմքերով:

ՄՈԴԵԼ ԵԱՀԿ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- Մոդել ԵԱՀԿ-ն ձգտում է ներգրավել նոր սերնդին, որը ԵԱՀԿ տարածաշրջանի ապագան է:

- Ձեր մասնակցությունը, Ձեր հետաքրքրությունը և Ձեր պատրաստակամությունը մասնակցել անվտանգության մարտահրավերներին, որոնց մենք այսօր դեմ ենք առնում, թարմ ուժ կտա տարածաշրջանում անվտանգ ապագա կառուցելու մեր ջանքերին:

- Հայաստանում երիտասարդները ոչ բավարար չափով են ներկայացված որոշումների և քաղաքականության մշակման մակարդակներում: Որպես մեր երկրի ապագա առաջնորդներ՝ նրանց պետք է հնարավորություն տալ մասնակցել այսօրվա քաղաքացիական կյանքին:

- Հայաստանում ժողովրդավարության հաստատման համար անհրաժեշտ է ստեղծել մի միջավայր, որտեղ առաջնորդների և ակտիվիստների նոր սերունդը կարող է մասնակցել ազատ քննարկումներին:

- Մամուլի և հանրային տեղեկատվության բաժնի հետ համատեղ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ժողովրդավարացման ծրագիրը աջակցում է երիտասարդների մասնակցությանը ժողովրդավական գործընթացներին: Մոդել ԵԱՀԿ համաժողովները հարստացնում են երիտասարդության գիտելիքները ժողովրդավարական որոշումների ընդունման և ԵԱՀԿ-ի՝ որպես անվտանգության բազմակողմանի գործչի մասին:

ՄԵՐ ԿՈՆՏԱԿՏՆԵՐԸ

Գյումրիում

Գոռ Թորոսյան
«Առտ» երիտասարդական, բնապահպանական և խորհրդատվական ՀԿ
Պ. Սևակի 8, Սբ. Հակոբ եկեղեցու մշակութային բաժին
Հեռ.՝ 094 68 11 69
gorotorosyan@gmail.com

Երևանում

ԵԱՀԿ երևանյան գրասենյակ
Սունդուկյան 64/1
Հեռ.՝ 010 229610/11/12/13/14, ներք. 5406 կամ 5462

Գոհար Ավագյան
Մամուլի և հանրային տեղեկատվության պատասխանատու
Gohar.Avagyan@osce.org

Մելինե Նահապետյան
Երիտասարդական և կրթական ծրագրերի ավագ օգնական
Meline.Nahapetyan@osce.org

www.osce.org/yerevan